

УДК 93/94

Վ. Մ. Աբրահամյան
1918-1921 թթ. ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՎԻՃԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Բանալի բառեր՝ վարչատարածքային բաժանումներ, տարածքային վեճեր, Լորի, Բորչալուի գավառ, Ախալքալաք, էթնիկ սկզբունք, երկշաբաթյա պատերազմ, չեզոք գոտի:

Ключевые слова: административные деления, территориальные споры, Лори, Борчалинский уезд, Ахалкалаки, этнический принцип, двухнедельная война, нейтральная зона.

Keywords: regional-administrative divisions, land disputes, Lori, Borchalu district, Akhalkalaki, ethnic principle, two-week war and neutral zone.

Հայ-վրացական վիճելի տարածքներ հանդիսացան Ախալքալաքի գավառը նրան սահմանակից Ծալկայի շրջանով, Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Խրամ գետից հարավ ընկած հատվածը, ինչպես նաև Ղազախ գավառի հարավարևմտյան մասը: Հայ-վրացական կարճատև պատերազմից հետո կազմավորվեց Լոռու չեզոք գոտի, որն ընդգրկում էր Վիրահայոց լեռներից մինչև Ձորագետ ընկած հատվածը: Հետագայում Չեզոք գոտու հյուսիսային սահմանը դարձավ հայ-վրացական միջպետական սահմանը:

1918-1920թթ. Հայաստանի Հանրապետության հարևան երկրներից, պատմական հայկական տարածքներին հավակնելու առումով, բացառություն չկազմեց նաև Վրաստանը: Օգտվելով Հայաստանի համար ստեղծված ծանր ռազմաքաղաքական դրությունից՝ Վրաստանն ամեն գնով փորձեց տեր դառնալ հիմնականում հայերով բնակեցված պատմական հայկական Լոռու և Ջավախքի տարածքներին և ի վերջո հասավ դրանց մի մասի միացմանը Վրաստանին:

Հայ-վրացական 1918-1921թթ. հարաբերությունների (այդ թվում՝ տարածքային հարցերի) վերաբերյալ ստեղծվել է բավականին ծավալուն գրականություն (Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան 2003թ., Սարգսյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-21թթ., Երևան, 2002թ., Վիրաբյան Վ. Վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցություն-

ները, Երևան, 2003թ. և այլն), սակայն այսօր էլ թեմայի բազմակողմանի լուսաբանումն ունի արդիական և գիտական նշանակություն:

Վրացական պատմագրությունն ու մամուլը ոչ միշտ են օբյեկտիվ գնահատական տալիս դարասկզբում տեղի ունեցած իրադարձություններին: Իր հակահայկական հրապարակումներով աչքի է ընկնում հատկապես Գուրամ Մարխուլիան (Գурам Мархулия, «Предательство у армян в крови», iberiana.wordpress.com/armenia-georgia/marxulia-interviu/, «Армяне готовятся к захвату Грузии», kavkasia.net/Armenia/article/1324960915.php): Մինչդեռ պատմական ճշմարտության վերհանումը ոչ միայն գիտական անհրաժեշտություն է, այլև միտված է հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունների պահպանմանն ու ամրապնդմանը: Այս առումով թեման արդիական է:

Հոդվածի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ ներկայումս տեղի են ունենում ինչպես վրաց-ադրբեջանական, այնպես էլ հայ-վրացական սահմանային ճշգրտումներ: Նման դեպքերում առաջանում են վիճելի հարցեր սահմանի այս կամ այն հատվածի վերաբերյալ: Դրա ցայտուն օրինակն է Բավրայի հատվածում տեղի ունեցածը, երբ Հայաստանի տարածքի 300 հա գյուղատնտեսական հողերը վերագրվում էին Վրաստանին՝ խանգարելով գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը: Վիճելի հարցեր կան Աղքյորփիի և Խոժոռնիի հատվածներում, որոնք հիմնականում պայմանավորված են սահմանն անտառաչերտով անցկացնելու հետ:

Մեր նպատակն է մեկ անգամ ևս ճշգրտել այն տարածքը, որը վեճի առարկա դարձավ դարավոր հարևանների միջև 20-րդ դարի սկզբին:

Հարցի ուսումնասիրությունը կատարվել է պատմական աղբյուրների համեմատական քննության, փաստերի համադրման և ընդհանրացումների մեթոդով: Առաջ քաշված եզրահանգումները հենվում են սկզբնաղբյուրների վկայությունների վրա:

Հայերի և վրացիների միջև վիճելի տարածքներ էին Ախալքալաքի գավառը (պատմական Գուգարք աշխարհի Ջավախք գավառ) նրան հարող Ծալկայի շրջանով (պատմական Գուգարք աշխարհի Թոեղք գավառ), Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Խրամ գետից հարավ ընկած հատվածը (պատմական Գուգարք աշխարհի Տաշիր գավառի հարավային մաս): Վերջինս XX դարի սկզբի կացությամբ համապատասխանում էր Բորչալուի գավառի Եկատերինենֆելդի ու Լոռու ոստիկանական տեղամասերին և Թրիալեթի ոստիկանական տեղամասի Խրամ գետից հարավ ընկած հատվածին: Վիճելի էր նաև Ղազախ գավառի հարավարևմտյան հայկական մասը: Հիշատակված վիճելի տարածքում գոյություն ունեին ազգային այսպիսի համամասնություն՝ 260 հազար հայեր, 7 հազար վրացիներ և 30 հազար այլ ազգեր¹:

¹ Սարյան Ա., Հայ-վրացական հարաբերությունների պատմությունից (Армяно-грузинский конфликт по поводу границъ), հրատ. Բանբեր Հայաստանի արխիվների, հ. 2, Եր., 2009, էջ 67:

Ազգային սկզբունքով Անդրկովկասի վարչական վերաձևման հարցը ծագել էր մինչև հեղափոխությունը: Այն քննարկվում է զեմստվային խորհրդակցություններում 1909 և 1916 թվականներին: Ըստ հայկական նախագծի՝ ազգային սկզբունքով տարածքային վերաբաժանումը յուրաքանչյուր ազգությանը հատկացնում էր հողի համամասնական քանակ: Ըստ Բաքվի Հայոց Ազգային խորհրդի 1918թ. դեկտեմբերին կազմած մի փաստաթղթի¹, եթե վերցնենք Անդրկովկասում հայերի, վրացիների և մահմեդականների ընդհանուր թիվը, ապա կստացվի, որ վրացիները կազմում են 28 %, հայերը՝ 29 %, և մահմեդականները՝ 43%: Հայկական նախագծով, համապատասխանաբար, հայերին պետք է անցնեք տարածքի 29 %-ը, վրացիներին՝ 30-33 %-ը, և թաթարներին՝ 38-41 %-ը: Հայկական նախագիծը կազմված էր արդար սկզբունքով, և հայ դեմոկրատիան ենթադրում էր, որ հեղափոխությունից հետո կհաղթանակի արդարությունը:

Փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասի երեք հիմնական ազգերը, իրենց հայտարարելով երկրամասի տերեր, որոշում են տարածքային հարցը լուծել ազգային սկզբունքով: Այդ սկզբունքն ընկած էր բազմաթիվ կառավարական ու հասարակական ազգամիջյան խորհրդակցությունների հիմքում և հավանության էր արժանացել բոլոր իշխող կուսակցությունների կողմից: Ինչպես սոցիալ-դեմոկրատ մենշևիկները, այնպես էլ վրաց ազգային-ֆեդերալիստները գտնում էին, որ սահմանների գծման հիմքում պետք է դրվի այս կամ այն ազգի ռեալ տեղաբաշխվածությունը: Ըստ վրաց սոցիալիստ-ֆեդերալիստների՝ «Վրաստանի տարածքի մեջ պետք է մտնեն Թիֆլիսի նահանգի հետևյալ գավառները՝ Թիֆլիսի, Գորիի, Դուշեթի, Թելավի, Սոնախի և Թիոնեթի, նաև վրացիներով բնակեցված Բորչալուի, Ախալքալաքի, Ախալցխայի որոշ շրջաններ, ինչպես նաև Քութայիսի նահանգը, Բաթումի մարզը և Սուխումի օկրուգի մի մասը: Ինչ վերաբերում է Բորչալուի և Զաքաթալայի շրջաններին, ապա դրանք Վրաստանի կազմի մեջ կմտնեն այն ժամանակ, եթե հանրաքվեի միջոցով այդպես ցանկանա բնակչության մեծ մասը»²:

1917թ. ամռանը Ներքին գործերի նախարարության կողմից Անդրկովկասի զեմստվային կարգին նվիրված խորհրդակցությունը, որին մասնակցում էին նաև Անդրկովկասի ներկայացուցիչները, նույնպես որոշում է ազգային սկզբունքով փոխել երկրամասի վարչական կառուցվածքը: Այդ նպատակով ստեղծվում է հանձնաժողով՝ սենատոր, պետական իրավունքի պրոֆեսոր իշխան Զուրաբ Ավալովի գլխավորությամբ: Հանձնաժողովի արձանագրության մեջ կարդում ենք. «Հանձնաժողովի անդամներ Շահխաթունյանցը և Խատիսյանն առաջարկում են Բորչալուի գավառից դուրս բերել Լոռու ոստիկանական տեղամասը և նրան հարող Բորչալուի և Եկատերինենֆելդի տեղամասերի գյուղական համայնքները, որոնք ունեն համատարած հայ բնակչություն: Նույն սկզբունքով Թրիալեթի տեղամասից Ախալքալաքի գավառին միացնել Աշղալի-

¹ Նույն տեղում, էջ 68:

² Նույն տեղում, էջ 69:

նի (Աշղալա Ներքին, Աշղալա Վերին)¹, Ավրանլինի (Ավրանլո)² և Նարդեվանի գյուղական համայնքները: Գորհի գավառի Բակուրիանիի գյուղական համայնքներից դուրս բերել 2 գյուղ՝ Կզըլ-Քիլիսա (Ղզըլքիլիսա)³ և Մոլիտ: Թիֆլիսի նահանգից դուրս բերել Ախալքալաքի գավառը»⁴: Հանձնաժողովի անդամների կողմից նշվում է, որ նպատակահարմար է սահմանն անցկացնել Խրամ գետով:

Ոչ էական փոփոխություններից հետո Ներքին գործերի նախարարությունն այն ուղարկում է Անդրկովկասի Հատուկ կառավարման կոմիտեին, որի հրավիրած խորհրդակցությունը (15 անդամ, յուրաքանչյուր ազգությունից 5 անդամ՝ Նոյ Ժորդանիայի նախագահությամբ) նույնպես հավանության է արժանացնում ազգային սկզբունքի հիման վրա կազմված նախագիծը: Միայն ազգային-դեմոկրատներն են հանդես գալիս Վրաստանի տարածքից Բորչալուի և Ախալքալաքի գավառների դուրսբերման դեմ⁵: Պետք է ասել, որ դեռ այն ժամանակ սահմանների հարցը գտնվում էր պետական-տարածքային և ոչ թե պարզապես վարչական վերաբաժանումների մակարդակի վրա: Անդրկովկասի Դեմոկրատական Դաշնային Հանրապետության հռչակումից հետո, երբ դարձյալ բարձրացվում է սահմանների վերանայման հարցը, արդեն ավելի պարզորոշ, խոսքը գնում է Անդրկովկասի երեք հանրապետությունների սահմանների մասին, որոնք կապված կլինեին դաշնային սկզբունքով:

Մինչև անկախ պետությունների հռչակումը վրացական Ազգային խորհուրդը ևս համաձայն էր ազգային սկզբունքով Հայաստանի կազմում տեսնել Բորչալուի գավառի մոտ 2/3-ը և ամբողջ Ախալքալաքի գավառը⁶: Իսկ 1918թ. հունիսին հայ նախարարների հետ պաշտոնական գրույցների ժամանակ Ժորդանիան հայտարարում է, որ Վրաստանը Լոռու հանդեպ հավակնություն չունի: Այսպիսով՝ հետևությունը մեկն է. վիճելի տարածքների Հայաստանին և հայ ժողովրդին պատկանելն ընդունվել է նաև վրաց ազգային ու քաղաքական շրջանակների կողմից: Սակայն շուտով իրավիճակը կտրուկ փոխվում է:

1918թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով Ախալքալաքի գավառն անցնում է Օսմանյան կայսրությանը: Գերմանա-թուրքական զորքերի կողմից ռազմակալված են մնում նաև Բաթումի պայմանագրով հաստատված սահմանագծից արևելք ընկած Լոռին (Բորչալուի գավառ) ու Փամբակը (Ալեքսանդրապոլի գավառ):

¹ Գյուղ ՎՀ Ծալկայի շրջանում: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 292:

² Հայաբնակ գյուղ ՎՀ Ծալկայի շրջանում, նույն տեղում, էջ 369:

³ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Թ.Խ.Հակոբյան, Ստ.Տ.Մելիք-Բախշյան, Հ.Խ.Բարսեղյան, Երևանի համալսարանի հրատ., հ. 3, Երևան, 1991, էջ 500:

⁴ Ասրյան Ա., Հայ-վրացական հարաբերությունների պատմությունից (Армяно-грузинский конфликт по поводу границ), հրատ. Բանբեր Հայաստանի արխիվների, էջ 70:

⁵ Նույն տեղում:

⁶ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 205:

Այդ նույն ժամանակ (հունիսի 6) պաշտոնական «Կովկաս» թերթում վրացական կառավարությունը հանդես է գալիս հայտարարությամբ այն մասին, որ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև սահմանների ճշգրտումն ու անցկացումը միայն հիշյալ երկրների իրավասությունն են, և որ Վրաստանի կառավարությունը կարող է այս հարցերի շուրջ անմիջական բանակցություններ վարել Հայաստանի ու Ադրբեջանի հետ, առանց Թուրքիայի միջամտության: Միևնույն ժամանակ հայտարարվում է, որ տարածքային հարցերի վերաբերյալ պայմանագիր, եթե այդպիսին կստորագրվի Թուրքիայի ու Հայաստանի միջև, Վրաստանի համար չի կարող պարտադիր լինել¹: Հունիսի 11-ին վրացական կառավարությունը որոշում է կազմել հանձնաժողով սահմանների ճշգրտման համար: Հանձնաժողովը պաշտպանում է Վրաստանի «տնտեսական, ստրատեգիական» սահմանները՝ նրա կազմում ընդգրկելով հայկական տարածքներ՝ ընդհուպ մինչև Սևանա լիճ: Համատեղ քննարկման համար հրավիրված Հայաստանի կառավարության ներկայացուցիչները պնդում են ազգային սկզբունքի պահպանման հնարավորությունը: Սակայն վրացական կառավարությունը կարգադրում է գրավել տարածքը մինչև Ղարաքիլիսայի և Շահալիի միջև ընկած թունելի կենտրոնական հատվածը, ինչի դեմ «Պայքար» թերթում բողոքում է Հայոց Ազգային խորհուրդը:

Որոշ պայմանների դեպքում հայկական կառավարությունը սկզբունքորեն հնարավոր էր համարում զիջումներ կատարել Վրաստանին՝ Ախալքալաքի գավառի հարցում: Ենթադրվում էր, որ այստեղ բնակվող արևմտահայերի սերունդները կարող են վերաբնակվել Անտանտի ճնշմամբ Հայաստանի Հանրապետությանը տրվելիք տարածքներում: Վրաստանն էլ իր հերթին պարտավորվում է Ախալքալաքն ստանալու դեպքում Խաղաղության վեհաժողովի առջև պաշտպանել հայկական պահանջները, միևնույն ժամանակ օժանդակել, որ Ադրբեջանը համաձայնի Հայաստանին զիջել մի քանի վիճելի տարածքներ²:

Վրացական գործադատներին հաջողվում է գրավել Լոռու ոստիկանական տեղամասի մեծ մասը (հյուսիսային հատվածը) և գերմանացիների հետ պահակակետեր հաստատել Կամենկա գետի (Ձորագետ) ձախ ափի երկայնքով: Նրանց գլխավոր պահակակետերը գտնվում էին Վորոնցովկա, Հայդարբեկ, Ալեքսանդրովկա, Ծաթեր, Քոբեր, Քարինջ բնակավայրերում: Իսկ թուրքական զինված զորքերը գտնվում էր Կամենկա գետի աջ ափի երկայնքով՝ Նովո Պոկրովկա, Ջալալօղլի, Նիկոլանկա, Գյառգյառ, Վարդաբլուր, Կուրթան, Դարաքենդ գյուղերի միջով, ապա դեպի արևելք՝ Քոբեր և Քոլագերան կայարանների արանքով դեպի Մարց և Լորուս բնակավայրերը³:

Վրաց կուսակցական ու քաղաքական գործիչները հավակնում էին Վրաստանի կազմում տեսնելու ոչ միայն ամբողջ Թիֆլիսի նահանգը, այլ նաև

¹ М. Туманян, *Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг.*, Ереван, 2012, стр. 88.

² М. Туманян, стр. 88.

³ Ռ. Հովհաննիսյան, *Հայաստանի Հանրապետություն*, Երևան, 2005, էջ 75-76:

Փամբակի հովիտը (Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի Առաջին ոստիկանական տեղամաս)¹: Հայոց և վրաց ազգային խորհուրդների ներկայացուցիչների բանակցությունների ժամանակ վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարներից, կառավարության անդամ Ի. Ծերեթելին հայտարարում է, որ հայ-վրացական սահմանը պետք է լինի այնպես, որ վրացական կողմում լինեն Բորչալուի և Ղազախի գավառները, իսկ թուրքերի հեռանալուց հետո նաև Ախալքալաքի գավառը և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանը²: Իրենց դիրքերը Կովկասում պահելու, հայ-վրացական հակասությունները խորացնելու նպատակով Արևելյան ճակատի թուրքական զորքերի հրամանատար Խալիլ փաշան հոկտեմբերին Թիֆլիսում գաղտնի զգուշացնում է Ջամալյանին, որ Վրաստանը պատրաստվում է ռազմակալել ոչ միայն Ախալքալաքի ու Բորչալուի գավառներն ամբողջությամբ, այլ նաև Փամբակի շրջանը, որը ՀՀ կազմի մեջ էր նրա անկախացումից ի վեր և որտեղ ոչ մի վրացի չէր բնակվում³: Իհարկե, ինչպես Փամբակի, այնպես էլ Ելիսավետապոլի նահանգի Ղազախի նկատմամբ վրաց հավակնություններն ունեին զուտ մարտավարական նպատակ՝ հետագայում հայտարարելու համար, որ իրենք այդ տարածքները զիջում են Հայաստանին:

Վրաց գործիչները փորձում են Վրաստանի հավակնությունները Լոռու և Ախալքալաքի նկատմամբ հիմնավորել պատմական, աշխարհագրական, տնտեսական գործոններով՝ անտեսելով ազգային սկզբունքը: Սակայն այդ երկրամասերի Հայաստանի կազմում լինելու անհրաժեշտությունը հիմնավորվում է նախ և առաջ ազգային առումով: Բորչալուի գավառի վիճելի հատվածում և Փամբակի շրջանում բնակվում էր 105000 հայ, 15000 մահմեդական, 1150 վրացի և 13000 այլ ազգեր(հույներ, ռուսներ և այլն) կամ 85,81% հայ և 0,85% վրացի: Ինչ վերաբերում է Ախալքալաքի գավառին և Ծալկայի շրջանին, որը նրա բնական շարունակությունն է, ապա այստեղ հաշվվում էր 82000 հայ, 9000 մահմեդական, 7400 վրացի, 8000 այլ ազգեր, այսինքն՝ 77,35% հայ և 6,9 % վրացի⁴: Աշխարհագրական առումով Լոռին ու Ախալքալաքը Հայկական լեռնաշխարհի մաս են կազմում: Պատմական առումով երկու գավառներն էլ բազմիցս ձեռքից ձեռք են անցել, սակայն միշտ պահպանել են իրենց հայկական բնույթը: Ռազմավարական առումով հանդիսանում են բնական պաշտպանական սահմանագիծ, իսկ տնտեսական առումով՝ բնական հարստություններով աղքատ Հայաստանի Հանրապետության համար արոտավայրերով, անտառներով, հանքային պաշարներով հարուստ այս երկրամասերը կենսական նշանակություն ունեն: Հայաստանի կառավարությունը մի քանի անգամ պաշտոնական բողոքներ է

¹ Բ. Հարությունյան, *Հայաստանի պատմության ատլաս, Բ մաս, Երևան, 2008թ, էջ 62-63:*

² Ա. Ջամալյան, *Հայ-վրացական կնճիորը, Երևան, 2011, էջ 32: Դրո, Կենսագր. հուշեր, կազմեց, խմբագրեց Ա. Անդրանիկյանը, Երևան, 1991, էջ 113:*

³ Մ. Կուսմանյան, *стр. 78.*

⁴ Նույն տեղում, էջ 94-95:

ներկայացրել թուրքական և գերմանական կառավարություններին, գերմանական և ավստրիական միսիաներին, Բաթումի պայմանագրով Հայաստանին պատկանող տարածքներն ազատելու վերաբերյալ և միշտ էլ ստացել է պատասխան, որ այդ գրավումը ժամանակավոր է¹: Հոկտեմբերի 5-ին թուրքական և հայկական շտաբների միջև ստորագրված արձանագրությամբ, թուրքական զորքերը պարտավորվում են հեռանալ հանրապետության տարածքից²: Վերջապես հոկտեմբերի 18-ին թուրքական զորքերի Փամբակից ու հարավային Լոռուց դուրս բերելուց հետո, հենվելով նույն արձանագրության վրա,³ Դիլիջանում գտնվող Դրոյի սպայակույտին կցված հայկական վաշտերը գրավում են Լոռին՝ Երևանի նահանգի սահմանագլխի Շահալի կայարանից մինչև Կամենկա գետը, այսինքն՝ մինչև թուրքական զինորդ: Իսկ մի քանի պարեկախմբեր երկաթուղու երկայնքով հասնում են մինչև Լոռու՝ վրացական հսկողության տակ գտնվող բաժնի ծայրակետ Օաթեր և Քոբեր: Սակայն գերմանական սպաների ներկայությունը վրացական կողմում հարկադրում է հայերին թողնել Քոբերն ու Օաթերը: Եվս մեկ անգամ հայկական կողմը գրավում է Քորինջ (Քարինջ) ու Օաթեր գյուղերը, սակայն հոկտեմբերի 26-ին ստիպված են լինում թողնել այդ երկու գյուղերը⁴: Գերմանացիները խնդրում են հայերին չանցնել Օալկա գետը, որը նրանք համարում են վրացական սահման, միննույն ժամանակ արգելվում է վրացիներին անցնել «թուրքական» զինորդ⁵:

Այսպիսով՝ հայ-վրացական առճակատման առաջին շրջանում հաջողվեց Հայաստանի վերահսկողությունը հաստատել Հարավային Լոռու վրա, իսկ հյուսիս շարժվելու փորձերն ավարտվեցին անհաջողությամբ:

Լոռու տարածքի հարցը խաղաղ, դիվանագիտական ճանապարհով լուծելու բոլոր փորձերը ձախողվեցին, և հայ-վրացական զինված բախումը դարձավ անխուսափելի: Դեկտեմբերի 5-ին վրացական զորքերը մտնում են Ախալքալաք: Տեղեկանալով վրացական զորքերի ներխուժման մասին՝ կառավարության հրահանգով հայկական մի ջոկատ դեկտեմբերի 7-ին զբաղեցնում է Ախալքալաքի գավառի Ալեքսանդրապոլի գավառին կից շրջանը՝ խուսափելով Վրաստանի հետ ռազմական բախումից: Յուրաքանչյուր ունեցող այս գործողության նպատակն էր հաստատել հայկական կողմի իրավունքը Ախալքալաքի նկատմամբ, սակայն վրացական կողմի պահանջով նրանք նահանջում են Ալեքսանդրապոլ՝ թողնելով Ախալքալաքի գավառի Եֆրեմովկա և Տրոյիցկոյե գյուղերը⁶: Ջավախքի հարցում Հայաստանի կառավարության այդ «զգուշավոր» քայլը, որ ավելի շուտ անվճռականության և իրավիճակում ճիշտ չկողմ-

¹ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, Եր., 2010, էջ 67:

² *М. Туманян, стр. 78:*

³ *Նույն տեղում: Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 67:*

⁴ *Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 207-209:*

⁵ *М. Туманян, стр. 81:*

⁶ *Ս. Վրացյան, էջ 216:*

նորոշվելու հետևանք էր, բավական թանկ նստեց Հայաստանի և մասնավորապես Ջավախքի հայության վրա: ...Բավական ուշացումով Հայաստանի ղեկավարության ձեռնարկած քայլերն այդպես էլ շոշափելի արդյունք չտվեցին»¹: Լոռու տարածաշրջանում հայերի համար ստեղծված ծանր դրությունը քննարկվում է Հայաստանի խորհրդի ղեկավարների 12-ի, 13-ի, 16-ի նիստերում²: Հայաստանի կառավարության հրամանով Դիլիջան-Լոռիի գործակալ Դրոյի հրամանատարությամբ հոկտեմբերի 14-ին առաջ է շարժվում Վորոնցովկա-Պրիվոլնոյե, Օփրեթ-Այրում գծով³: Մինչև դեկտեմբերի 15-ը հայկական զորքերը գրավում են Վորոնցովկան, Պրիվոլնոյեն, Սանահինը, Միխայլովկան, Ալավերդին: Դեկտեմբերի 16-20-ն ընկած ժամանակահատվածում ազատագրվում են Այրում կայարանն ու Բոլնիս-Խաչենը: Գրավելով Շուլավեր գյուղը՝ հայկական ուժերը հասնում են Խրամ գետին, իսկ դեկտեմբերի 22-ին ազատագրում են Սադախլու կայարանն ու գյուղի ծայրամասերը: Շուլավերի ու Թիֆլիսի գավառի Բելի-Կյուչ գյուղաքաղաքի գրավումով հայկական զինված ուժերը հայտնվում են Վրաստանի մայրաքաղաքից 50կմ հեռավորության վրա⁴: Դեկտեմբերի 25-ին դաշնակիցների ներկայացուցիչները Թիֆլիսում պահանջում են դադարեցնել պատերազմը: Բաքվից Թիֆլիս ժամանած բրիտանական փոխգնդապետ Ջորդանի կարծիքով, հայկական ու վրացական զինված ուժերը պետք է ազատեին նախկինում թուրքական գրավման ներքո գտնված վիճելի տարածքը, ներառյալ Ախալքալաքը, և փոխարինվեին բրիտանական զորքերով մինչև Փարիզի հաշտության վեհաժողովում նրանց կարգավիճակի որոշումը: Վրաստանը մերժում է այդ առաջարկը և բրիտանացիները իրենց նախնական առաջարկություններում կատարում են փոփոխություններ, որի համաձայն՝ վրացական զորքերը պետք է մնային Ախալքալաքում և Բորչալուի հյուսիսային մասում, հայկական զորքերը՝ Հարավային Բորչալուում, իսկ նրանց միջև ընկած տարածքում պետք է լինեին «Չեզոք գոտի» բրիտանական հսկողության տակ⁵: Այսպիսով՝ հայերը հետ էին քաշվելու մինչև Դսեղ-Ջալալօղլի գիծը: Նրանք ստիպված էին զիջել բրիտանական ուժեղ ճնշմանը, քանի որ ինչպես հայ-վրացական, այնպես էլ ամբողջ անդրկովկասյան խնդիրների տնօրինողը բրիտանական զինվորական միսիան էր⁶:

1919թ. հունվարի 9-17-ը հայկական, վրացական և դաշնակիցների պաշտոնատար անձանց մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդաժողովում հայկական կողմն ստիպված համաձայնվեց, որ Ախալքալաքում տեղակայվի վրա-

¹ Ա.Մելքոնյան, *Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին*, Երևան, 2003, էջ 299:

² Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 116-135:

³ Ս. Վրացյան, էջ 220:

⁴ Ռ. Հովհաննիսյան, էջ 121:

⁵ Ս. Վրացյան, էջ 225:

⁶ Սուքիասյան Հ., *Հայ-վրացական խաղաքարար կոնֆերանսի հայկական պատվիրակության հաշվետվությունը (1918թ. դեկտեմբեր-1919թ. մարտ)*, Պատմաբանասիրական հանդես, հ.1, Երևան, 2009, էջ 190:

ցական երկու վաշտ՝ դաշնակիցների հսկողության ներքո և երաշխավորվի հայերի մասնակցությունը վարչությանը, ինչը այդպես էլ չիրականացավ: Ի վերջո Վրաստանը վերջնականապես հաստատվում է այդ տարածքում: Խորհրդաժողովում հաստատվում է նաև բրիտանացիների առաջարկած ծրագիրը Բորչալուում չեզոք գոտի ստեղծելու վերաբերյալ, որը տարածվելու էր Սադախլուի մատույցներից մինչև հայկական զորքերի կողմից նախքան երկշաբաթյա պատերազմը գրաված դիրքերը:

1919թ. հունվարի 25-ին Հայաստանի խորհրդարանի նիստում Արտաքին գործերի նախարարը ներկայացնում է 1919թ. հունվարի 9-17-ը տեղի ունեցած կոնֆերանսում Վրաստանի և Հայաստանի լիազոր ներկայացուցիչների միջև ստորագրված որոշումը: Ըստ որոշման՝ Բորչալուի գավառի չեզոք գոտու սահմանը հյուսիսում պետք է կազմեր այն գիծը, որը միացնում էր 1918թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վրացական բանակային զորամասերի կողմից զբաղեցրած կետերը: Այն ձգվում էր Լեզլի-դաղից լեռնաշղթայի ուղիղ գծով մինչև Իրդանչայ գյուղը, այնուհետև ուղիղ գծով դեպի Կուլուֆաշ գագաթն ընկած ջրբաժան գիծ և Վիրահայոց լեռների գագաթագծով մինչև Սաաթի գյուղը և դարձյալ գագաթներով մինչև Ջանդար (Ջադար) գյուղ և Աղքյորփի, ապա մինչև Օփրեթ գյուղ և Խոժոռնիի եկեղեցու ավերակները, այնուհետև մինչև Բրդաձոր գյուղ, Սադախլու գյուղ, Սադախլու կայարան, մինչև Թանադաղ լեռ, ապա սահմանը հասել է մինչև Խաչկայա լեռը և Պալութի Բաշի գագաթները:

Իրդանչայ, Սաաթի, Ջանդար, Աղքյորփի, Օփրեթի, Խոժոռնի, Բրդաձոր, Սադախլու գյուղերը մնում են սահմանային գծից հյուսիս¹:

Բորչալուի գավառի չեզոք գոտու հարավային սահմանը համարվում է Դսեղ-Ջալալօղլի գիծը, որը որոշվել է 1918թ. դեկտեմբերի 25-ի համաձայնագրով: Այսպիսով՝ կարելի է ասել, որ Չեզոք գոտու սահմաններն անցնում էին հետևյալ բնագծով. հարավային սահմանը Ջորագետն էր, հյուսիսային սահմանը կազմում էր Վիրահայոց լեռները, արևմուտքում Խոնավ լեռներն էին, իսկ արևելքում՝ Գուգարաց լեռները²: Չեզոք գոտու հյուսիսում վրացական զորքերն զբաղեցնում էին Ախալքալաքի գավառից մինչև Օփրեթ գյուղն ընկած հատվածը: Հայկական զորքերը տեղակայվելու էին Քոլագետան կայարանից մինչև Դսեղ հատվածը, ինչպես նաև Ջալալօղլի-Գյառգյառ հատվածում: Լոռու չեզոք գոտին ընդգրկում էր Ալավերդու պղնձահանքերը, 43 գյուղ՝ գերազանցապես հայկական և երկաթուղու մոտ 30 մղոնանոց հատվածը՝ 6 կայարաններով: Չեզոք գոտու տարածքը բաժանվեց Ուզունլարի, Վորոնցովկայի և Ալավերդու տեղամասերի, որոնցից յուրաքանչյուրն ուներ 4-5 վոլոստներ՝ գավառակ-գյուղախմբեր: Ալավերդու տեղամասն ուներ 4 վոլոստ՝ 11 գյուղերով, Ուզունլարինը (այժմ՝ Օձուն)՝ 4 վոլոստ՝ 11 գյուղերով, Վորոնցովկայինը՝ 5 վոլոստ՝ 15 գյու-

¹ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 163:

² Հայաստանի պատմության ատլաս, էջ 22:

ղերով¹: Հայ-վրացական սահմանը այդպես էլ 1918-1920թթ. չհաստակեցվեց: Հետագայում՝ 1921թ., այն վերջնականապես ճշտվեց: Կնքված համաձայնագրով սահմանն սկսվում էր Թուրքիայի, Հայաստանի և Վրաստանի սահմանագլխին գտնվող Ուչ-թափալար լեռնագագաթից, դեպի արևելք հասնում է Օրթուլ դաղ լեռը, ապա թեքվում հյուսիս-արևելք և արևելք՝ Մադաթափա լիճն ու Տրոյից-կոյե գյուղը թողնելով Վրաստանին, Տատոյ Խարաբա (այժմ՝ Շիրակի մարզի Բավրա գյուղ), Կարմիր Խարաբա և Դարաքեյ (Սարագյուղ) գյուղերը՝ Հայաստանին՝ մինչև Լեզլի դաղ (այժմ՝ Աչքասար գագաթ Ջավախքի լեռներում), ապա սահմանն անցնելու էր Վիրահայոց լեռների ջրբաժանով՝ մինչև Պալուծի Բաշի լեռը²: ՀԽՍՀ ժողկոմխորհի մասնագետների կարծիքով, ազգագրական, տնտեսական և այլ տեսանկյուններից Աղ Քյորփի, Օփրեթ, Խոխմել, Բրդաձոր, Գյուլիբաղ, Դամիա, Լիճքաձոր, Խոժոռնի, Չանախչի, Ճոճկան և այլ գյուղեր իրենց հողահանդակներով պետք է լինեն Հայաստանի կազմում: Այսինքն՝ նրանք դեմ էին Վիրահայոց լեռների ջրբաժանից հյուսիս ընկած հայկական գյուղերի միացմանը Վրաստանին³: Մակայն սահմանը հիմնականում անցավ Չեզոք գոտու հյուսիսային սահմանով⁴: Նյուլթի քննությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

Հայերի և վրացիների միջև վիճելի տարածքներ հանդիսացող Ախալքալաքի գավառը Ծալկայի շրջանով, Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Խրամ գետից հարավ ընկած հատվածը, ինչպես նաև Ղազախ գավառի հարավ-արևմտյան մասը, որոնք թե՛ էթնիկական, թե՛ աշխարհագրական, տնտեսական, պատմական ու ռազմավարական առումներով պատկանում էին հայ ժողովրդին, 1918-1920թթ. հայերի ու վրացիների միջև դարձան վիճելի տարածքներ:

Վիճելի տարածքների Հայաստանին ու հայ ժողովրդին պատկանելը, մինչև Անդրկովկասում ազգային պետությունների հռչակումը, ընդունել են նաև վրաց ազգային ու քաղաքական շրջանները: Ընդ որում, հարցը դրված էր պետական-տարածքային և ոչ թե պարզապես Անդրկովկասի վարչական վերաբաժանումների մակարդակի վրա:

Հայ-վրացական առճակատման առաջին շրջանում (1918թ. հոկտեմբեր) հաստատվեց հայկական կողմի վերահսկողությունը Հարավային Լոռու վրա, սակայն հյուսիս շարժվելու փորձերն ավարտվեցին անհաջողությամբ:

Հայոց զորքի հաղթանակը հայ-վրացական երկշաբաթյա պատերազմում հարկադրեց Անդրկովկասում գտնվող դաշնակցային ուժերին դուրս բերել Լոռին վրացական վերահսկողությունից և ստեղծել այնտեղ Չեզոք գոտի, ինչն էլ

¹ Ս. Կարապետյան, *Զինված ապստամբությունը Լոռիում 1921թ. Երևան, 1955թ., էջ 12-14: Ա. Մելքոնյան, էջ 308:*

² Ա. Մելքոնյան, էջ 345: *Տեղագրական քարտեզներ, K-38-100, K-38-101, K-38-102, www.abp.am:*

³ Նույն տեղում, էջ 344:

⁴ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, էջ 163:

հետագայում ավելի դյուրին դարձրեց այդ տարածքի միացումը Հայաստանին: Հայ-վրացական սահմանն անցավ Չեզոք գոտու հյուսիսային սահմանով:

В. М. Абрамян

К вопросу армяно-грузинских спорных территорий 1918-1920гг.

Спорными территориями для Грузии и Армении считались Ахалкалакский уезд с Цалкинским районом, а также территория Борчалинского уезда находящегося южнее реки Храми. Вместе с тем спорными считались юго-западная часть Казахского уезда. После кратковременной армяно-грузинской войны, образовалась нейтральная зона Лори, которая простерлась от Сомхетских гор до реки Дзорaget.

В последствии северная граница нейтральной зоны стало госграницей между Грузией и Арменией.

V.M.Abramyan

On the Armenian-Georgian 1918-1920 land dispute

Akhalkalaki and Tsalka, the Southern half of Borchalu and the North-Western part of Ghazakh were considered to be disputable territories. After the Armenian-Georgian war the so-called “Neutral Zone” of Lori was formed comprising the land stretching from the Virahayots Mountains to Dzoraget. Later on the Northern border of the Neutral Zone became an intergovernmental border between Armenia and Georgia.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո Ւ Ն

1. Ասրյան Ա., Հայ-վրացական հարաբերությունների պատմությունից (Армяно-грузинский конфликт по поводу границъ), հրատ. Բանբեր Հայաստանի արխիվների, հ. 2, Երևան, 2009, էջ 66-70:
2. Դրո, կենսագրական հուշեր, վկայություններ, քաղ գրակ. մատենաշար, կազմեց, խմբագրեց Ա.Անդրանիկյան, հրատ. «Ազատ խոսք», Երևան, 1991, 410 էջ:
3. Կարապետյան Ս., Զինված ապստամբությունը Լոռիում 1921թ, Երևան, 1955թ:
4. Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., գլխ. խմբագիր Ա.Վիրաբյան, Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2010, 616 էջ:

5. «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», Թ.Խ.Հակոբյան, Սո.Տ.Մելիք-Բախշյան, Հ.Խ.Բարսեղյան, հ. 1, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1986, 991 էջ, հ. 3, Երևան, 1991, 991 էջ:
6. Հարությունյան Բ. Հ., Հայաստանի պատմության ատլաս, Բ մաս, Մակմիլան Արմենիա ՀՁ ՓԲԸ, Երևան, 2008:
7. Հարությունյան Բ. Հ., Հայաստանի պատմության ատլաս, Գ մաս, Մանմար ՀՁ ՓԲԸ, Երևան, 2012:
8. Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն, հատոր I, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Տիգրան Մեծ հրատ. Երևան, 2005, 570 էջ:
9. Մելքոնյան Ա. Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ 97» հրատ. Երևան 2003, 544 էջ:
10. Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիորը, «Միտք» վերլուծական կենտրոն, Լուսակն հրատ., Երևան, 2011, 244 էջ:
11. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, III տպագր., Թեհրան, 1982:
12. Սուքիասյան Հ., Հայ-վրացական խաղարարար կոնֆերանսի հայկական պատվիրակության հաշվետվությունը (1918թ. դեկտեմբեր-1919թ. մարտ), Պատմաբանասիրական հանդես, հ.1, Երևան, 2009, էջ 185-206:
13. Տեղագրական քարտեզներ, K-38-100, K-38-101, K-38-102, www.abp.am
14. Туманян М.Г., Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг., Национальный архив Армении, Институт истории НАН РА, тип. ООО “Айкарли”, Ереван, 2012, стр.471.

Տեղեկություններ հեղինակի մասին

Աբրահամյան Վարդիթեր Միքայելի - պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, պատմության և հրավագիտության ամբիոն, E-mail: v.abrahamyan@yahoo.com

Տրվել է խմբագրություն 30.05.2013.